Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
11.07.2016թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ **8498**
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	11	0.12
դիմում	6501	76.5
բողոք	1863	21.9
կրկնակի	84	0.98
կոլեկտիվ	39	0.45

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ **1287**

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	760	59.3
բողոք	527	40.3

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	84	0.98
կոմունալ-կենցաղային	8	0.09
շինարարական	2	0.02
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	3	0.03
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	164	1.92
առողջապահության	116	1.35
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	890	10.4

օրենսդրական	55	0.64
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	436	5.13
ապարատային	120	1.41
այլ հարցեր	6618	77.8
սեփականաշնորհում	2	0.02

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2016Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 8498 նամակներից մոտ 0.12%-ը եղել են առաջարկություններ: Վերցված է վերահսկողության 1287 բողոք դիմումներ: Բողոքները կազմել են շուրջ 21.9%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 77.8%-ը տարաբեր հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 10.4%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 0.98%-ը առնչվում է բնակարանային, 0.09%-ը կոմունալ-

կենցաղային, 0.12%-ը առողջապահության, իսկ մնացած՝ մոտ 76.5% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 8313-ին տրվել է գրավոր իսկ 65 տրվել է բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 120-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է: